**ՀՀ Արագածոտնի մարզպետ Դավիթ Գևորգյանը և ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարի տեղակալ Հակոբ Սիմիդյանը աշխատանքային այց են կատարել Նոր Եդեսիա համայնք**

Այսօր ՀՀ Արագածոտնի մարզպետ Դավիթ Գևորգյանը և ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարի տեղակալ Հակոբ Սիմիդյանը աշխատանքային այց են կատարել Նոր Եդեսիա համայնք, հանդիպել են բնակիչների հետ, լսել նրանց խնդիրները և պատասխանել հարցերին:
Համայնքի բնակիչների կողմից բարձրացված հիմնական խնդիրը խմելու ջրի չկանոնակարգված մատակարարումն էր: Այժմ Նոր Եդեսիա համայնքում ջուր ստանում են երկուական օր ընդմիջումներով: Մարզպետի հանձնարարությամբ ընթացք է տրվել համայնքի ամենօրյա ջրամատակարարումն ապահովելու գործին:
Քննարկվել են կրթության կազմակերպման, դպրոցի սանհանգույցի վերակառուցման, ջեռուցման ապահովման, համայնքում մանկապարտեզ ունենալու և համայնքային նշանակության այլ հարցեր: